# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի ութերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի (ժամանակահատված՝ 01.07.2023թ.-27.12.2023թ.) ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ**

1. **Կայացած նիստերի քանակը կազմել է 23-ը՝ 4 հերթական, 5 արտահերթ եւ 14 համատեղ նիստեր՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ** (ԱԺ խորհրդի որոշմամբ հաստատված ժամկետացանկի համաձայն «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի 13 նախնական քննարկում եւ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային ու ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ թվային փոխակերպման (թվայնացման) գործընթացի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկում):

2. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել են «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2024 թվականի վարչական ծախսերի եւ կապիտալ ներդրումների ու Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2024 թվականի վարչական ծախսերի նախագծերը:

3. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել թվով **21 օրենքի նախագծի**՝ (որից՝ 2-ը օրենքների նախագծերի փաթեթներ): Օրենքների նախագծերից, որպես օրենք ընդունվել է 9-ը (որից՝ 2-ն օրենք-համաձայնագիր), 1-ն ընդգրկվել է նստաշրջանի օրակարգում՝ (որը քննարկվել եւ ընդունվել է առաջին ընթերցմամբ), իսկ նստաշրջանի օրակարգում դեռեւս չի ընդգրկվել 11 օրենքի նախագիծ:

**11 նստաշրջանի օրակարգում դեռեւս չընդգրկված՝**

**1)** **Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0**«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**2)** **Պ-726$^{1}$-27.11.2023-ՖՎ-011/0** «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**3)** **Պ-726$^{2}$-27.11.2023-ՖՎ-011/0** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**4)** **Պ-726$^{3}$-27.11.2023-ՖՎ-011/0** «Ներքին աուդիտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին

**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**5)** **Պ-726[4]-27.11.2023-ՖՎ-011/0** «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**6)** **Պ-726[5]-27.11.2023-ՖՎ-011/0** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**7)** **Պ-726[6]-27.11.2023-ՖՎ-011/0** «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**8)** **Պ-726[7]-27.11.2023-ՖՎ-011/0** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**9)** **Պ-726[8]-27.11.2023-ՖՎ-011/0** «Հաշվապահական հաշվառման եւ աուդիտորական գործունեության կարգավորման եւ հանրային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**10)** **Պ-726[9]-27.11.2023-ՖՎ-011/0** «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**11)** **Պ-726[10]-27.11.2023-ՖՎ-011/0** «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին
**Հեղինակներ՝** Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան

**3.1. Նիստերի ընթացքում քննարկվել է 9-ը օրենքի նախագիծ, որից՝**

- **8-ն ընդունվել է ամբողջությամբ՝**

1) **Կ-617-19.06.2023-ՖՎ-011/0** «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի եւ վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KFW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» հայտագրերի փոխանակման ձեւով կնքված համաձայնագիրը վավերացնելու մասին

**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյան)

2) Պ-564-19.04.2023,22.05.2023-ՖՎ-011/2ամբ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին
**Հեղինակ՝** ԱԺ պատգամավոր Գեւորգ Պապոյան

3) Պ-592-23.05.2023,07.07.2023-ՖՎ-011/2ամբ. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին
**Հեղինակներ՝** ԱԺ պատգամավորներ Գեւորգ Պապոյան, Համիկ Հակոբյան

4) Պ-592[1]-23.05.2023,07.07.2023-ՖՎ-011/2ամբ. «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին
**Հեղինակներ՝** ԱԺ պատգամավորներ Գեւորգ Պապոյան, Համիկ Հակոբյան

5) Կ-641-17.07.2023-ՖՎ-011/2ամբ. «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյան)

6) Կ-669-02.10.2023,04.12.2023-ՖՎ,ԱՍ,ՏՀ,ԱռՀ,ՏՏԳԾ,ՏԵ,ՊԻ,ԱՀ,ՊԱ,ԳԿ,ԵԻ,ՄԻ-011/0 Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին.
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան)

7) Կ-710-14.11.2023-ՖՎ-011/0 «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան)

8) Կ-733-30.11.2023-ՖՎ-011/0 Հայաստանի Հանրապետության եւ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջեւ «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին.
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյան)

- **1 օրենքի նախագիծ ընդգրկվել է նստաշրջանի օրակարգում, քննարկվել եւ ընդունվել է առաջին ընթերցմամբ՝**

Կ-661-11.09.2023,27.11.2023-ՖՎ-011/1 «Ներքին աուդիտի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյան)

- **1 օրենքի նախագիծ ընդունվել է դեկտեմբերի 22-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի ընթացքում՝**

Կ-751-21.12.2023,22.12.2023-ՖՎ-011/0 «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին
**Հեղինակ՝** ՀՀ կառավարություն
(Հիմնական զեկուցող՝ **ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան**)

**4. Տեղեկանքներ /թվով 4/.**

1) 2023 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանք:

1) 2023 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանք:

2) Բյուջետային գրասենյակի 2023 թվականի երկրորդ եռամսյակի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3) 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանք:

**5. Հանձնաժողովի որոշումներ /թվով 2/.**

1) ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում քաղաքացիների ընդունելության 2023-2024 թվականների տարեկան ժամանակացույցը հաստատելու մասին:

2) ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի եւ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ հրավիրելու վերաբերյալ:

**6. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝**

1) Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածության եւ Ազգային ժողովին այդ պաշտոնում թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված **Հակոբ Վանիկի Միհրանյանի** թեկնածությունը):

**7.** Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի նիստում ընդունած որոշման համաձայն (քաղաքացիների 2023-2024 թվականների ընդունելության տարեկան ժամանակացույց)՝ վեցերորդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովն ունեցել է 4 ընդունելություն, գրանցվել է 6 քաղաքացի, ինչպես նաև ուսումնասիրվել են քաղաքացիներից ստացված 22 դիմում/նամակ:

**8. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց ուղարկված հարցումներ /թվով 3/.**

**8.1. ՀՀ Գլխավոր դատախազություն**
Համացանցում հրապարակված նյութի վերաբերյալ **ԱԺՀ.5/5757-2023**

**8.2. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ**
2023 թվականի արդյունքային ցուցանիշների վերաբերյալ **ԱԺՀ.5/5533-2023**

**8.3. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ**
2023 թվականի բյուջեով ամրագրված ծախսերի վերաբերյալ **ԱԺՀ.5/5187-2023**

**9. Աշխատանքային քննարկումներ /թվով 4/.**

**9.1.** Հուլիսի 14-ին՝ Երեւանի քաղաքապետարանին պարտատոմսեր թողարկելու հնարավորություն տալու մասին օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ:

**9.2.** Հուլիսի 26-ին՝ «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

**9.3.** Սեպտեմբերի 2-ին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:

**9.4.** Հոկտեմբերի 3-ին՝ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին եւ «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին նախագծերի փաթեթի վերաբերյալ:

**Ամփոփում՝**

**1. Կայացած նիստերի քանակ – 23, որից՝ 4 հերթական, 5 արտահերթ և 14 համատեղ**
**2. Նախագծեր՝ թվով 21, որից 9-ն ամբողջությամբ ընդունված, 1-ն առաջին ընթերցմամբ ընդունված եւ 11-ը դեռեւս նստաշրջանի օրակարգում չընդգրկված**

3. Տեղեկանքներ – 4
4. Հանձնաժողովի որոշումներ – 2
5. Քաղաքացիների ընդունելություն – 6 քաղաքացի, Դիմում-նամակ – 22
6. Հարցումներ – 3
7. Աշխատանքային քննարկումներ – 4